

ՔԱՆՔԱՆՈՐ ԱՊՐՈՒԹԻՒՆ

Պոլիգրաֆիայի համար  
Տարեկան 10 մ.  
Վեցամսեայ 5 »  
Արտատպանի համար  
սարճեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
ԿԱՆԻՒԿ ՎՃՃՐԵԼԻ  
—)(—  
Գրութիւնք և՛ չեն տրուիր  
—)(—  
Իրանացիան տղր 20 սան-  
քիւն և՛ Երևանի ան ի ան-  
գաւաններու համար 20 Օլօ  
գեղջ կըլլայ :


# ՇԱՐՋՈՒՄ

B. P. Kallimkarian  
(Austria)  
Mechtharistangasse W. 4  
Vienna

Նախկին և՛ դրամ դրկի  
Խմբագրութեան հասցեից

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Աշխարհագրականօրէն՝ արտասահման կանուանենք բոլոր այն երկիրները որոնք հիւրընկալած են թրքական խմորութիւններու պատճառով իրենց բնագաւառէն դուրսնետուած հայերը :

Իսկ բարոյական տեսակէտով, արտասահմանը այն է ուր հայերը աւելի ազատ պայմաններու տակ կապրին, ու սոսկէն կաշկանդուած չեն միջոցներ ունին խորհելու ու զճշտելու թէ ի՞նչ պէտք է ընել ազգին ամբողջական մարմնին համար :

Արտասահմանը մեզի համար դոյրութիւն սկսած է ունենալ այն սեւ օրէն երբ հայրենիքը ձեռք բերուա խլուկացա : Դարերու գործ է արտասահմանը, որ մահաւանդ վերջին տարիներու պատմական տխուր անցքերէն ետքը բոլորովին ընդարձակուելով վիթխարի բան մը դարձած է : Թեւեաւ Անգլիայէն ետքը մենք ենք որ ամենէն շատ ցըրուած եզրայրներ ունինք աշխարհի ամէն կողմերը :

Թողով այդ հեռաւոր ճառագայթները, արտասահմանը վերածենք իրեն որոշ և հոծ մասերուն :

Պուլխարիա, Ռումանիա, Ամերիկա, Եգիպտոս, Փրանսա և Անգլիա. ահա՛ արտասահմանը :

Այդ երկիրներու մէջ ճշմարիտ հայ աշխարհ մը կայ, որուն մասերը թէև աշխարհագրականօրէն մէկգծէն են, սակայն հեռու, բայց զգացումով և ձգտումներով շատ մօտիկ են իրարու : Ամենքն ալ օր մը, Մայր հայրենիքի դուր զերգաղաղաւառու իտէալովն է որ կապրին, ամենքն ալ անկեղծ փափաքն ունին օգտակար ըլլալու Հայաստանցիին, և կայրին ու կը մրկին անոր մարտիրոսական կեանքին լուրերը առնելով :

Հայաստանցիին ալ շանդիրտանար թէ արտասահմանը կը կարեկցի իր վիճակին. բայց երբեք մտքէն չանցունէր թէ զարհուրելի կերպով պղտորանական է այդ կա-

րեկցութիւնը. և իր ամենէն կծու տառապանքներուն մէջ, այն միտքով թիւնը ունի, թէ հեռաւոր, ազատ հայերը չպիտի ուշանան ազգեցիկ օգնութիւններ հասցնելու իրեն, որ հայրենի երկրին ու անոր սրբութիւններուն անձնուէր պահպանեն է :

Հեռաւորար մենք, արտասահմանի հայերս, որոշ և անյեղի պարտականութիւն մը ունինք մեր առջև : Իրենք կան ընկերք որոնք ի պլուխ կրնան ելլել միայն ամենուր հաւարական գործակցութիւնովը :

Արտասահմանի զանազան մասերուն մէջ, այսօր համաձայնութեան և դաշինքի հետք մը անգամ գոյութիւն չունի. և նոյն իսկ իրարու վրայ շատ մակարդակային տեղեկութիւններ ունին : Կը ճանչնա՞ր տեղի անհրապարհ բան մը, քան անյլտանալ թէ ի՞նչ կրնէ հեռաւոր եղբայրդ, ի՞նչ կը խորհի այն՝ որ ճիշդ ու ճիշդ քու ուրախութիւնդ ու արտօմութիւնդ կը կրէ : Արտասահմանը իր կոչումին մէջ չէ. հոկայ մըն է և երախայի շարժումներ ընելով կը բաւականանայ. ովկիան մը կրնայ ըլլալ վերփրուն, սպառնալից, բայց հանդարտ լճակ մը, գրեթէ ճուճի՛ճ մը դառնալ կը նախընտրէ :

Չէ՛, արտասահմանը այսպէս մնալու չէ : Ազգային զուտ հանդուածներ մը կրելը չբռնել իրեն, պէտք է քաղաքական ահագին նշանակութիւն մը ստանայ. և անոր մասերը պարտաւոր են ձեռք ձեռքի տալով, օսմանցիներու խախտու կայրութեան շուրջը ըլլալը իր թէ ու կրակէ այնպիսի շրջանակ մը, որ Հայաստանցիին կեանք, ողբերգութիւն տայ, և թուրքին մամտութիւնը :

ԳԱՍԵՐ-ԱՐՇԱԻՐ

### Ն. Ս. ՄԱԿԱՏՈՒՓ

Տ. Ֆ. Ֆոքչան. -- Փետրի սկիզբը :  
— Ով որ գիտէ թաթիլու Տոստոբեանի (Անբաւալ Երասար գիւղէն 30 ասրեկան) ուր գտնուիլը, թող փութայ իմացնել խմբագրութեանը :  
— Նոյն խմբագրութեան անոնց որ անգիկութիւն ունին քարակոփ թաթիլի խաղաղի Յովաննիս Թափաղիկանի վրայ :

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարից, 20 Հոկտ.

Արտիկանի հոգեհանգստին առթիւ տեղի ունեցած ցաւալի միջազգայն պարգիւն առաջ. փութամ յայտնել թէ անցեալ ամսոյ վերջերս, Բարիցի մէջ, յիսուսի շափ ազգայիններու ներկայութեան, հաստատուեցաւ «Հայ ուսանողաց Ակումբը» որ ուսանողաց «Միութեան» սարքեր մարմին մըն է : Արդարեւ մինչդեռ Միութիւնը իրեն նպատակ ընտրած է լոկ ուսանողական ինդիւիտիւրով զբաղել, Ակումբը աւելի լայն սակարկի մը ընտրած է իրեն, և պիտի հետամտի ի գործ դնել, իր կարողութեան սահմանին մէջ, ամէն ինչ որ օգտակար կրնայ ըլլալ բարիքարեան հայուն :

Բացուած բաւական լաւ անցաւ : Միայն թէ ցաւալին հոն է որ խկոյն խուլ հակառակութիւն մը ծագեցաւ երկու մարմիններուն մէջ, այն է՝ Միութեան և Ակումբին : Միութեան ներկայացուցիչը Ակումբին հաստատման օրը իսկ փորձեց խորովութիւն հանել, սա յաւանտա տարկութեամբ թէ սինչո՞ւ Միութեան բարձր հաւանութիւնը չէր անուամ Ակումբին հաստատման ձեռնարկիցէ առաջ :

Ակումբը իր նպատակին հաւատարիմ սկսած էր արդէն գործի. երկու կողմերը կը արքէր, լարտները կը կազմակերպէր, և գիշերային դասախօսութիւններ կը հաստատէր ֆրանսերէնի ուսուցման համար :

Ակումբի Գ. Նիսաին մէջ որոշուեցաւ Արտիկանի յիշատակը փառաւորել, և յաջորդ կիրակի օր հոգեհանգիւստի պաշտօն կատարել տալ Բարիցի մատրան մէջ, և այս մտքով հրախարհարար զրկեց ամենուր, տեղուայ Հոգեւոր Հովոյին և Հոգաբարձութեան հաւանութիւնը ստանալէ ետքը :

Հետաքրքիր էք անշուշտ իմանալու թէ Միութեան անդամներ ի՞նչ եղանակով կը վերաբերուին Ակումբին այս սկզբնական և արդէն այնքան յուսանգրիչ ձեռնարկներուն :

Այս պարտիները, կը ցաւալ ըսել, հանրութեան օգտակար ըլլալու մտքով ճամբայ ելլողներու վարմունքը չունեցան : Ո՛ր միայն առաջին նիստէն սկսելով փորձեցին գործը քայքայել, այլ և՛ ամենէն անվայել մակդիրներով յորջորջեցին Ակումբը, ու սրճարանի մը մէջ ժողով գումարելով որոշեցին գրել անոր որպէս զի ճշտանողը բարձր յապուէ. իբր թէ այդ բանին մենաշնորհը լաւացած ըլլային իրենք : Բայց ասիկա չէր բաւէր : Միութեան անդամներին մէկը,

հայ ճաշարանին մէջ ի տես գրուած հրախարհարար կը պատու, յայտարարելով թէ «հոգեհանգստը տեղի չպիտի ունենայ» : Ուրիշ մը սուս սուս կը շրջի հանրագրութիւն ժողովուրդ Ակումբին դէմ, զոր միտքը դրած է եղեր կործանել, կան ալ որոնք իրենց զրկուած հրախարհարար ետ դարձուցած են, միեւնոյն ասեն նախատալից նամակներ ուղղելով նախագահին : Պայքարը աւելի սաստկանալով, Միութեան անդամները այս անգամ շիակէ շիակ Հոգաբարձութեան կը զիմն պահանջելու որ հոգեհանգիստը տեղի չունենայ, որովհետեւ ասիկայ Դաշնակցականներու գործ է : Կարծես ասով հակըցնել ուզած են թէ իրենք վերակազմաւոր են :

Օտեաններու, Ազաթօններու և Ռոսիաններու արժանաւոր յաջորդներին ո՞վ կալընկալէր այսպիսի անպատկառ վերաբերում մը անմահ Արտիկանի յիշատակին :

Արդարեւ, անոնց Հոգաբարձութեան ասեանակցութիւն, Տիար Լաթիֆի կորովին ու ողջմտութեան, վերջ Հայաստանի հեղինակը պիտի զրկուէր իր հոգեհանգիստէն՝ որ տեղի ունեցաւ ի բացակայութեան Միութեան անդամներուն : Այժմ կրմանամ թէ այժ պարտները պարտաւարկ մը հրատարակած են որուն մէջ կը յայտարարեն թէ Ակումբի հիմնադիրները ուսանող չեն (ինչ որ բացարձակ ստոխոսութիւն մըն է) և թէ վերջնապիսի սուս և՛ որպէս զի «ուսանող» բառը Ակումբին քովէն վերցուի :

Շտեմբերի 15 Հոկտ.

Միայն և՛ որպէս զորձաւորները չեն որ գործադուլ կընեն. Մեր քաղաքին ուսմանացի, հայ, յոյն և թուրք գործաւորներն ալ, որոնք երկար ատեն տառապած էին գործերու դանդաղ ընթացքէն, տեսնելով որ այս պահուստ ողբերգութիւն կայ Դաշնակցի Պրայլի ափին վրայ, ուր բազմաթիւ շոգեհաններ կան շարուած, միաձայնութեամբ որոշեցին շաշխատիլ, մինչև որ օրականին 6 ֆրանքէն 8 չի բորձրանայ, և աշխատութիւնն ալ օրական 10 մամի չվերածուի :

Յաւալին այն է որ այս գործադուլը, որ, ինչպէս ըսի, ամէն ազգէ գործաւորներու փափագովը տեղի ունեցած էր, մասնաւորապէս հայ աշխատաւորներու զըլ-

խացա պատճառեց, որովհետև անգացի յայտնի թուրք մը, որ սերտ յարաբերութեան մէջ է թրքական հիւպատոսարանին հետ և զուցէ այս վերջնոյն թելագորութեամբ, դացեր ոտտիկանութեան լուր է սուեր որ, իբր թէ հայերը եղած են գործադուլին պատճառ: Ասկէց զատ, վերոյիշեալ թուրքը յայտարարեր է թէ հայերը միտք ունին եղբր թուրքերու վրայ յարձակիլ, ու կառավարութեան աջակցութիւնը խնդրեր է:

Ասոր վրայ, ոտտիկանները բոլոր հայ սրճարանները շրջելով պահանջեցին որ հայ գործադուրները կամ իրենց սենեակներուն մէջ փակ մնան, և կամ աշխատին, որպէս զի խաղաղութիւնը վերահաստատուի:

Բաւական դժուարութեամբ պարզուեցաւ հայերու անմեղութիւնը և խնդրին իսկութիւնը: Բայց թուրքերը երբ ամէջած են իրենց ըրածներէն: Գործաթողները իրենց պահանջումներուն մէջ որոշ չափով զոհացում գըտան:

և սեպտեմբերի 4ին վերսկսեց: Նոյն գիշերը ուսուցիչ Պ. Վահան թափառեան դաստիարակաց «Նանսէնի հիւսիսային բնակարան» կատարած արշաւանքին վրայ: Նիւթը բաւական հետաքրքրական էր, յայտնի էր որ դաստիարակականչան էր մշակած այն, սակայն կը ներքէ մեզ պարտնը, և թէ նկատենք թէ արշաւանքի օգուտներն ու գիտական խաղաղութիւններն մասին բնաւ հոգ չէր տարած: Լա կը լինէր, որ իբր նոր բան ժողովրդին հազորդուէր այդ խաղաղութեան գիտական արգիւնքները:

Պ. դաստիարակ խնդրում ենք, որ հաճի այդ պահտուն էլ լրացնել և ամբողջ հայտնել զաստիարակութիւնը հայ մամուլին:

Հիմնական կանոնադրի համաձայն «Ասորանական Ընկերութեան» վարչութեան վեցամսեայ շրջանին լրացել էր. նոր վարչութեան ընտրութիւնը կատարուեց առաջնորդարանում, նախագահութեամբ առաջնորդ Այլտան Սրբազանի, սեպտեմբերի 11ին և նոր վարչութեան անգամ ընտրեցին Պ. Պ. բժիշկ Կ. Փաշաբանց (Պոլսեցի), Նազար Գորոյեանց (վաճառական), Նիկողայ Տէր Օհանեանց, Մելքոն Շահապեանց, Արեղնազով Ալիքանեանց, Վահան Բժիշկեանց և Սարգիս Անդրէասեանց (ուսուցիչներ):

Լսարանական ընդհանուր ժողովում յայտնել է, որ դպրոցից արտաքսոված տեսուչ Ն. Սուսանեանց մի քանի անդամներն վճարները գանձել և չէ յանձնել ընկերութեան գանձապահին. հետեւաբար ընկերութիւնը արտաքսել է նրան և անունը ջնջել անդամների ցանկից:

Լսում ենք նաև, որ այդ ստորարարածը իր նման, դպրոցից արտաքսոված մի ուրիշ ուսուցչի հետ միացած ուսուցչական նոր խմբի այս և այն անդամների մասին մատնութիւններ է անում:

Սրանք ե՞ն ապագայ հայ սերունդ պատրաստողները: Վա՛յ այն աղբիւն, որ իրա ծոցում պահում է այս կարգի առաջնորդողներին, ազգագուէրին: . . .

ՄԻՐՁԱ

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԿՁՐՈՒՆԲԻ (6) ԵՐԱՍՏԱՆԻՍԻՒՅԻՆԸ

Ձ. ՍՈՒՍՈՒՆԻՍԻՆ. — Ընդհանուր աղաւորութեանց կրկնութիւնը յառաջացնում է մի արտաքին երեւոյթ, որ կոչւում է «սովորութիւն»:

Արդ, անհամար զգիտակցական միութեան համար գերակշիռ նշանակութիւն ունի այն հանդամանքը, երբ մարդկային ընկերութեան մի բաղմամբաւ մարմին իր գոյութեան ընթացքում հաւաքաբար ստացել է կրկնուող այնպիսի սպասարութիւններ, որոնք իրենց բնաւորութեամբ հանրական զգացմունքների հանդոյցները գաւառաւոր այդ ընկերութեան անդամները իրարու հետ են շարժուել և իրենց մղիչ ազդակներ յառաջ բերել միանման ընդհանուր գէժեր, նոյնանման վարք ու լարք, սովորութիւններ, սալու և զգալու: համանման եղանակներ:

Մեծ նշանակութիւն ունի, երբ մի հաւաքական մարմնոյ կրած զօրաւոր աղաւորութիւնները նուիրադործուած են պատմական զանազան տխուր կամ ուրախ անցքերով, այնպէս որ իւրա-

քանչիւր անդամ դիտել թէ որոշեալ մասնակցին յայտնի խնդիրների մէջ նա ի՞նչ գիւրք պիտի բռնէ և կամ ի՞նչ պիտի գտնէ:

Երբ դարեւոր սովորութիւնները այս կերպով իբրև հանրական շաղախ իրենց ոյժով կարողացած են բոլորովին զատ, անշատ մի մարմն կազմել, այն ժամանակ ակնբեր է որ այդպիսի հաւաքական մարմնոյ անդամները շատ գիւրա պիտի համաձայնին օտար, արտաքին թշնամու գէժ ելնելու, զանազան վատ կամ լաւ ձեռնարկներ անելու, երբ խնդիրը ի հարկէ ընդհանուրին է վերաբերում:

Ահա այդ նկատուած է որ գերմանական թէօթեան պնդում է, թէ հանրական սովորութիւնները մի ազգի էական յատկանիշն են կազմում, և հետեւաբար նրանք ազգայնութեան գլխաւոր տարրը համարում:

Ժամանակակից մի մտածող կարծում է թէ ազգայնութիւնը գործակիցների մի խումբ է, որ իրարու հետ են շարժուած սովորութիւններով:

— Արքան որ սովորութեան առաջ բերած միութեան ոգին անվիճելի լինի, այնու ամենայնիւ նկատուողութեան պիտի առնել այն անհրաժեշտ իրողութիւնը, որ երկրազոյրին վրայ բացարձակապէս գոյութիւն չունի մի ազգ, որի բոլոր անդամները միեւնոյն սովորութիւնները ունենային: Սովորութեանց տեսակէտէ ազգութիւնները միշտ ստորաբաժանում են փոքրիկ փոքրիկ կղզիների, որոնցից իւրաքանչիւրը ունի իր տեղական յատկ սովորութիւնները, որ բոլորովին տարբերում են միւս մասերի մէջ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՆՈՒՆՁ ԲԱՐԵԿԱՍՏ

Անբացատրելի հոգեկան մի տանջանք խոռովում է հոգիս, յուսնի բարակ շողքը անցնում է յուսամտի վարագոյրի արանքով և ինձ անհանգստացնում անկողնիս մէջ: Խաւարեւ մտ թե՛ ուզում, աչքերս ի՞նչի չիտկում եմ, բայց քունը փախչում է: Ել անկարելի է դառնում անկողնում մնալ. վեր եմ կենում տեղիցս, մտանում յուսամտիս, աչքերս պայծառ երկնքին ուղղում, յուսմով գտնէ այնտեղ հոգիս իսաղաղացնելու մի միջոց գտնեմ: Բայց ի գոչ, ճնշող անյայտ մի ուժ փակնում իմ ներքին աշխարհը: Լսու թիւնը թագաւորում է ամեն տեղ, քաղաքը մեռած է: Կենդանութեան նշոյն չի կայ: Յանկարծ ուշքս գրաւում է ժամացոյցս հնչելով. «չը՛կ, չը՛կ, չը՛կ»: Բայց ինչ գարմանալի հնչիւն, աւելի ճիշդ մի տեսակ յուզում, գողգոջուն և գանգատող ձայն: Մեքենայաբար մտանում եմ սեղանին, աչքերս սեւեռում ժամացոյցիս սլաքների վրա. նրանք ցոյց են տալիս առաւօտեան ժամի երկր: «Չը՛կ, չը՛կ», շարունակում

է նորը եւ սիրտ թափանցող ձայնով նա խօսում է. Աստուած իմ հոգի է առել և հնչում է: — Գու տխուր ես, իմ բարեկամ, ինչու ես ինձնից քո վիշտը թագնում, քանի տարի է ինչ ես քո ծոցում եմ, սրտիդ հետ միասին բարսել եմ, չէ որ քո սրբատու և հոգում անցած դարձածները ինձ յայտնի են. ահա ժամացոյցիս առաջին խօսքերը: Սարսափում եմ, զգում եմ որ քնած չեմ, բայց ի՞նչ է այն, կոչմամբ, երա՞զ: «Չը՛կ չը՛կ» լսում եմ կրկին. էլ չեմ կարողանում կանգնել սեղանի մօտ. հեռանում եմ խօսող ժամացոյցից, և նորից սկսում նայել դժգոյն յուսնին: Երկնքի յուսատուն անզգայ է, նա կարում է իր սովորական ճանապարհը:

— «Չը՛կ, չը՛կ, չը՛կ»: Ինչու ես ինձնից փախում, իմ արեւկամ, թանկագին Սուրբն, յայտնում է նա: Ձայնը քաշում է ինձ, կրկին մտանում եմ ժամացոյցիս. լուսնի շողքը ուղիղ վրան է ընկել, պարզ սեանում եմ թէ ինչպիսի վայրկեան ցոյց տեսող սլաքը արագ վաղում է: Կանգնում եմ եւ նայում:

— «Չը՛կ, չը՛կ, չը՛կ»: Ես իր Սուրբն յոյժաբար, համոզվի որ ես էլ սիրա, հոգի և զգացմունք ունեմ. համոզվի որ ես էլ միշտ մասնակից եմ ե-

զել քո սիրտ թափանցող և վրշտերին. պատմեմ քեզ կեանքիդ ամենաբարձր և ամենախոր վայրկեանները. յիշում ե՞ս. մայիսեան մի գեղեցիկ երեկոյ էր. առաջին ժամացրութիւնը ունկիր քո սիրտ աղջկայ: Ասողիկ հետ: Նշանակված էր ժամի հինգը: Գեո ճաշից առաջ շարունակ ինձ զրպանիցը հանում եւ նայում էիր. սլաքներս շարժվում էին կանտոնաւոր և ուղիղ կերպով, բայց զու աշնքան անհամար էիր, որ կարծում էիր թէ ես փչացել եմ և զանգաղ եմ շարժվում: Սիրող սասաթի արժուում էր և կարծես պայթել ու զուււ. ես լաւ էի զգում նրա սանկ զարկերը, որչափ արագ էին նայնք: Հիւանդը զու էիր, սիրոյ հիւանդ: Հասաւ քո սպասած ժամի հինգը. զու մտար պարտէզ, նստեցիր սեղանիս թիկնու տակ. նստարանի վրա. աչքերդ երբեմն վաղող ջրին էիր ուղղում, երբեմն պարտէզի գրան կողմը: Հինգից միայն երկու վայրկեան էր անցել, բայց զու բարկանում էիր եւ ինձ ուժով սեղում, քո կարծիքով այդ միջոցին ես արագ էի վազեցնում իմ սլաքները: Վերջապէս Ասողիկը և աւ. սեղանը ձեռքը և շիկնելով կողքից նստեց: Գու չուէր համարեա թէ կարվում էր, զու չէիր կարողանում

սիրող բաց անկ սիրուհոյ տաջև. նա էլ յուս էր եւ յուզված. բայց երջանիկ, որովհետեւ լաւ հասկանում էր թէ իր սէրը քո գեռաթի սրտում ինչ փոթորիկ էր բայ ձրացրել Յանկարծ մի զոյգ աղաւնիներ ճվլալով իջան գետի ափը ու սկսեցին նազելով զու իմիւ. զու նայեցիր այդ սիրող գոյգին, մի քիչ սիրտ տար, երեքդ գէպի Ասողիկին ծուցից և չըթուէքները գուրս թան «Ասողիկ, սիրում եմ քեզ». «ես էլ քեզ, և յաւիտեան» եղաւ Ասողիկ պատասխանը: Գու ք երկար, չստ երկար նստեցիք, կուրծքերդ իրար նայած, շնչերդ միասին խառնած. երջանիկ էիք և շարունակ սիրոյ խօսքեր էիք թոթովում: Վայրիկաները եւ ժամերը սաճում էին, զու ինձ բոլորովին մոռացել էիր. էլ երեսիս չէիր նայում. ես նախանձում էի Ասողիկին, տանջվում, բայց եւ այնպէս շարժում իմ սլաքները եւ քո երջանկութեան վայրկեանները զլուում անանման յաւիտեանականութեան գիւրք: Վերջապէս հասաւ ձեր բաժանվելու վայրկեանը, զու սասցիր, «Ասողիկ վաղը նոյն ժամին» «Այո Սուրբն» խօսքերը ստացար իբր պատասխան Ասողիկի ջերմ համբոյրի հետ:

Ասողիկը թուաւ, մի քանի վայր

եղածներէն : Ուրեմն եթէ ազգայնական ման պայման ընդունին, սովորութիւնները, այն ժամանակ մի քանի ազգութիւններ պիտի ստորաբաժանուէր :

Հարաւային Ֆրանսացիները, ինչպէս նաև հարաւային գերմանացիները, բոլորովին սարքեր սովորութիւններ ունին իրենց ազգակից հիւսիսային ֆրանսիացիներէն և հիւսիսային գերմանացիներէն :

Իսաքերը, Պարսիցիներէն բոլորովին տարբեր սովորութիւններ ունին, բայց նրանք միեւնոյն ազգայնութեան անդամներն են :

Նկատողութեան մի ուրիշ կէտ էլ կայ : — Երկու հարեւան ազգութեան կողք ապրող անգամները կարող են ունենալ հանրական միեւնոյն սովորութիւնները :

Պիւքսելի բնակիչները նոյն սովորութիւնները ունին, ինչ որ պարսիցիները, բայց այդ հանգամանքը չի խանգարում, որ նրանք երկու ազգութիւնների պատկանին :

Արեւմտեան գերմանացիները և արեւելեան ֆրանսացիները գրեթէ միեւնոյն սովորութիւնները ունին, բայց նրանք տարբեր ազգութիւններ են կազմում :

Նոյն երկուցը նկատելի է և մեր մէջ : Տարօնի հայի սովորութիւնները բոլորովին տարբերում են Վասուրականցիներէն : Սիւնցիներ միեւնոյն սովորութիւնները չունեն, ինչ որ Մոկացիներ են : Սակայն չնայելով դրան՝ նոքա բոլորն էլ միեւնոյն ազգի անդամներն են :

Ուրիշ հանգամանք : Եւրոպական քաղաքակրթութեան ծաւալումովը հետզհետէ անգլական, այսպէս ասած, ազգային սովորութիւնները տեղի են ստանալիս :

Րոտիւնները տեղի են ապրիւնի համար մարդկային սովորութեանց : Այդ կողմէն յատուցումը իմաստեան հասանքը բոլորովին պարզ է :

Հետեւաբար սրբան որ սովորութիւնները, ազգայնութեանց կազմակերպման մէջ իրենց պատմական գերը ունեցած լինին, այնուամենայնիւ այսօր այլևս չի կարելի ընդունել որ, նրանք միայնակ ազգայնութեան սկզբունք համարուին :

Ս. ՍԱՊԱՆԻ-ԻՒԻԻԼԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՍՒԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր Դարի 122 թիւի մէջ Յար. Ասատուրեան ստորագրութեամբ կիպրոսի նիկոսեա քաղաքից գրուած նամակի մէջ նամակագիրը իբր թէ քրննադատելով Մշակին սուած իմ նամակների բովանդակութիւնը, առիթը չէ փախցրել և իմ դէմ մասնաւորապէս այնպիսի կեղատու լեզու գործ դնել, որպէս իմ միայն վայել է երեսուցէթի սրտերի մէջ սնուած մի արտայայտութիւն :

Անկարելի նկատելով ընդունուած ձևով պատասխանել այնպիսի մի ազդող գրութեան, այն էլ սպառնալով իրեն արժանի կողմակի երեսուցէթեան թերթի—Նոր-Դարի մէջ, միակ պատասխանս կը լինի իմ լուստրիանալիսից ղէպի այդ մասին անձնաւորութիւնը :

Կը ինչպիսի, Պ. Խմբակիր, անկողնայ կրկնողիս նստումի էջերից մեկում :

ՄԱՐ.

Կասնակա (Կիպրոս), 17 օգոստ. 98

ՔՐՈՆԻԿ

—)(—

Մոսկուայի հայ վաճառական, Պ. Իսահակ Ժամհարեան, իր ծննդավայրին՝ Նուշի մէջ հաստատած է հիւանդանոց մը, որուն յատկացած է 110,000 ռուբլի գրամադրութիւն մը : Կաթողիկոսը Նուշի բրոնտայցի թման առթիւ օրհնած է հիւանդանոցը սա խօսքերով : «Օրհնեմ այս հիւանդանոցը, կը մաղթեմ որ շուտացաւի, և կազմեմ որ բնաւ հրեանք չլինի» : Պ. Ժամհարեան որ Մոսկուայէ Շուշի եկած էր, 12 հազար ռուբլի տոյն չէր մտեր է կաթողիկոսին իբրև աջակցութեամբ : Կը յատարարէ թէ Ժամհարեանները ծախքի վանքըն ալ պիտի վերաշինեն : Նոյն բարերարները 18,000 օսմ. սակի նուիրած են ազգասիրի ազոյ պատուարման և կրթութեան համար :

Կապուած է 110,000 ռուբլի գրամադրութիւն մը : Կաթողիկոսը Նուշի բրոնտայցի թման առթիւ օրհնած է հիւանդանոցը սա խօսքերով : «Օրհնեմ այս հիւանդանոցը, կը մաղթեմ որ շուտացաւի, և կազմեմ որ բնաւ հրեանք չլինի» : Պ. Ժամհարեան որ Մոսկուայէ Շուշի եկած էր, 12 հազար ռուբլի տոյն չէր մտեր է կաթողիկոսին իբրև աջակցութեամբ : Կը յատարարէ թէ Ժամհարեանները ծախքի վանքըն ալ պիտի վերաշինեն : Նոյն բարերարները 18,000 օսմ. սակի նուիրած են ազգասիրի ազոյ պատուարման և կրթութեան համար :

—Կիւմանաք թէ Բարիկի նորահաստատ հայ ուսանողական Ակումբը «Համալսարան» անունով պարբերական թերթ մը պիտի հրատարակէ :

—Իզմիրէն կը գրեն թէ Ֆէրքինը զրկուլ և պահպանող ընկերութեան նախագահը հոն կը գտնուի այս միջոցիս, քննելու համար փախուսական եպիսկոպոսին սրկիական արարքը : Կըսուի թէ մտադրութիւն ունի կըր 100 աղու համար մանկանոց մը հիմնել : Չյոստացուի թէ Իզմիրի հայերը հանդուրժեն որ հայ ազգաբարձեալ յաճախեն այդ օտար հաստատութիւնը, որ այնքան ախար որքան ամօթալի յիշատակ մը թողուց :

—Կարինի առաջ. տեղապահ Տ. Ջաւեն վարդապետ, իր հովուական այցելութեանց միջոցին, Դաշաք, Դերշան և Խնուս հանդիպելու ապա Բաթէն գացեր է : Վարդապետը ձեռնարկներ կընէ Բաթէնի Ս. Աստուածածնայ աւերուած վանքը վերանորոգելու : —Կարինի մէջ, սեպտ. 30 ին

թերթե կերպով ձևն անգացի է : —Ճէվահիրեան և Ասլանեան նորապսակ եպիսկոպոսները անցեալ Բշ. օր Պոլս վերագարծեր են :

—Վրէժէրկայսրը Բրուսիական թագ պատուանշանին առաջին աստիճանը նուիրեր է Սուլթանի անձնական գոնձու նախարար Սադրը Յովհաննէս էֆ.ին :

—Վառնաի Թաղական Իորհրդոյ բնարութիւնները տեղի ունեցան անցեալ կիրակի օր և քուէից բացարձակ անաւելութեամբ նոյն խորհրդին անգամ ընտրուեցան Տիարք. Մուրաթ Սերգիսեան, Սարգիս Ազունպոզոսեան, Խաչիկ Տամատեան, Պողոս Փափաղեան, Շնորհք Տափառեան, Յովակիմ Թովմատեան և Բովհ. Հայրապետեան :

—Կըսուի թէ Ֆէրքի պուլիական նորաւառոյց եկեղեցիին օժման առթիւ Պոլս գացող պուլիկոս եկեղեցականները մերժեր են այն պատուանշանները զորս թուրք կառավարութիւնը նուիրած էր իրենց : Նոյնպէս բարձրաստիճան պուլիար սպայ մը, որ այս պահուս պաշտօնով Շումլա կամ Բլէվնա կը գտնուի, չէ ղիշաներ ընդունելու իրեն նուիրուած թրքական պատուանշանը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ԵՐԼՏՆԱԿԱՆ ԽՆԻԻԲ

Ամսոյս 15ի առաւօտուն, Երեք շոգեմաներ բաղնաթիւ թուրք զինուորներ փոխադրեցին կղզիէն դուրս : Բոլոր ամբոցներէն թուրք զինուորները գէպի Սուրաի ծովախորշը կը դիմեն, իշենց կարգին նաև հեծնելու համար : Տարուցսի խաղձ ժողովուրդը

կան նրա հասկից նայեցիր. ապա աննայի ինձ ծոցից և գիտեցիր. դու հաշտու մէջ իմ միջին վարժան ժամագրութիւնը գեա քանի ժամ կար...

Ամբող մի սարի դու երջանիկ էիր քո Աստղիկով. յանկարծ մի օր սիրեցիր : Լաւ յիշում եմ, աչուն էր. մի անպաւան օր, ժամի չորսը կրկին Աստղիկի հետ ժամագրութիւն ունէիր. շարունակ ինձ ծոցից հանում էիր զոգացող ձեռքով. նշանակեալ ժամին դու արդէն պարտէզում էիր, նոյն թիւնու սակ. նրա սիրունները բոլորովին գիտնել էին. փնտ մէջ գուրա քամի ու մեծած տերեւներին գետին թափում : Աստղիկը ուշանում էր : Վերջապէս եկաւ. թանձր քողը երեսին. չըտեղով բարեւոյց, թոյլ կերպով ձեռք թոթովեց, նստեց կողքից և սկսեց հովանոցի ծայրով գետինը փորփրել : Երկար ժամանակ երկուսը էլ լուս էին. յանկարծ դու ընդհանար լուսիւնը արուր ծայրով «Աստղիկ, ինչ էիր ուզում սես. ինչու ևս սոցալէս սառ. միթէ արդէն ամեն ինչ վերջացաւ մեր մէջ» : որչափ յաւաստեալան էին այդ խօսքերը, իմ սիրտս ցուրց կծկվեց, մի ակընթարթի չափ ևս կանգնեցի. սլաքնուրս անշալ ժացան...

Աստղիկը լուս էր, վերջապէս չընչած. — մտա բարով Սուրէն, էլ քեզ չեմ սիրում : Գու կաթմակնորսի պէս տեղում մի անգիր. դուսն որքան քո անքրից, մտացար ժամանակը, երկար շատ երկար այդպէս կես շուտ գնաց նստեցիր : Աստղիկը արդէն վաղուց քեզից հեռացել էր. բայց դու չէիր զգում : Վերջապէս անոնց ինձ նայելու հետոյս արդէն տեսնեցի, որ քեզ խոտոտակ սիրելի յատիտեան ևս ուր դասաւանդեցին... այնուհետեւ ինձ աչքից գցեցիր. բոլորովին մոտացար. շատ անգամ մի քանի օրով չէիր լարում ևս ևս մեռնում էիր, անշնչանում, բայց քո հոգը չէր. ևս չէի վերաբերում ևս չէնց որ ձեռք գրկուում էր ինձ, մտանում էր քո մահացող պաղու թիւնը, սիրտս թոթում էր, սրաքներս շարժում էին ևս քեզ ցոյց տալիս ժամ ու վայրկեաններ, որքանք. Աստղիկին կորցնելուց յետոյ, քեզ համար էլ նշանակութիւն չունէին, կարծես Աստղիկի սիրոյ հետ ամեն բան ոչնչացել էր քեզ համար :

Այդ վիճակը բաւական երկար տեսեց. մի գիտեցի որ կրկին սկսեցիր յաճախ ինձ նայել. սլաքնեյս անաղիլ անձամբերութեամբ. նորից ժամագրութիւն ունէիր : Այս անգամ, ոչ աղջկայ, այլ մի երկասարգի հետ, մի սան մէջ : Ես շատ ուրախացայ, սրովհետեւ հակառակորդ սղջիկ չէր. այլ տան մէջ դուք խոտոտացար հատարիմ, անձուեր, գործակից բնկեր և բարեկամ լինել Սյնուհետեւ դու ինձ շարունակ նայում էիր, սրովհետեւ միշտ բոլորովին հետ ժամագրութիւն ունէիր : Ես զարթեցայ ևս նոր կեանք ւտացայ, սրովհետեւ օրը մի քանի անգամ ինձ ձեռքից մէջ էիր տանում ևս նայում իմ աչք սլաքներին : Երջանիկ էիր բոլորովին, քո սիրտն էլ նորից կենդանացել էր ևս զարկում էր մեծ ախոյժով : Այժմ նրան թոթոնցում էր ոչ աղջկայ, այլ մարդասեր, հասնողուն ևս անձուեր բնկերով սերը : Ընկերով, որը ուխտել էր քեզ հետ միասին ապրել, քեզ հետ միասին մեռնել ուրիշների սիրուն մղած կուի մէջ : Այդ տեսեց մի քանի տարի : Երջանիկ էիր դու, երջանիկ էիր ևս. յանկարծ մի օր, գիշերով ժամի 11ին, քո այդ պաշտած ևս հաւատարիմ բնկերը, նոյն սան մէջ, քեզ յայտնեց :

«Սուրէն, մենք իրար չենք հասկանում, այսօրվանից մեր ճանապարհները բաժանուած են» : հեռացաւ : Բարեբախտաբար այս անգամ արուց չեցիր, այլ մի երկասարգի հետ, մի սան մէջ : Ես շատ ուրախացայ, սրովհետեւ հակառակորդ սղջիկ չէր. այլ տան մէջ դուք խոտոտացար հատարիմ, անձուեր, գործակից բնկեր և բարեկամ լինել Սյնուհետեւ դու ինձ շարունակ նայում էիր, սրովհետեւ միշտ բոլորովին հետ ժամագրութիւն ունէիր : Ես զարթեցայ ևս նոր կեանք ւտացայ, սրովհետեւ օրը մի քանի անգամ ինձ ձեռքից մէջ էիր տանում ևս նայում իմ աչք սլաքներին : Երջանիկ էիր բոլորովին, քո սիրտն էլ նորից կենդանացել էր ևս զարկում էր մեծ ախոյժով : Այժմ նրան թոթոնցում էր ոչ աղջկայ, այլ մարդասեր, հասնողուն ևս անձուեր բնկերով սերը : Ընկերով, որը ուխտել էր քեզ հետ միասին ապրել, քեզ հետ միասին մեռնել ուրիշների սիրուն մղած կուի մէջ : Այդ տեսեց մի քանի տարի : Երջանիկ էիր դու, երջանիկ էիր ևս. յանկարծ մի օր, գիշերով ժամի 11ին, քո այդ պաշտած ևս հաւատարիմ բնկերը, նոյն սան մէջ, քեզ յայտնեց :

սասուր չերեւոց քո աչքերում, այլ ժպտացիր հեգնական ժպտով ևս չընչացիր :

«Ինձ պատճառեց սիրուիս բարի ճանապարհ նրան, ընկերս ինձ մոտացաւ. Աստուած հետը : Հիմա միայն եմ, ևս կապրեմ մենակ, լոկ կեանքս թշուառին սպասկար լինի» : Աստղիկ, կրկին ինձ մոտացար. ամենահին բարեկամից, որ շարունակ անարատնջ բարտեւել եմ քո սրտի հետ միասին : Քանի անգամ ինձ մեծցրել ևս քո չը լարելով, քանի անգամ քարերի վրա եմ բնկել քո անզգուշութեան պատճառով ևս տեղ տեղ վէրքեր ստացել, բայց ևս այնպէս քեզ չեմ մոտացել, չեմ վրէտացել : Հիմա էլ նոյնը եմ, հիմա էլ ջերմ ցանկութեան ունեւ, բարտեւել այն սրտի հետ միասին, ուր արձագանք էլ գտնում սարուկի, թշուառի, խեղճի ևս հիւանդի սա ու վախը, ցուն ու վիշտը...

Լսիր, սիրիք ինձ մի քիչ, խոտոտում եմ որ իմ իրար թնդալով կը գտրկէ անսահման ժամանակի վայրկեանները. որտեղ մէջ այսուհետեւ դու երբէք չես յուսախարով : Ես քեզից ոչ մի զոհողութիւն չեմ ուզում, միայն փոքրիկ ուշադրութիւն ևս ինձ չը մոտանալու արտադրութիւն. ցրկ, ցրկ, չրկ, չրկ... 4470

թուրք զինուորներու մեկնելուն վրայ մտատանջութեան մէջ իյնալով, այդ զիւրը իտալական զօրաբաժնի մը հսկողութեան տակ դրուեցաւ :

Այժմ հազիւ թէ 500 ի չափ թուրք զինուորներ կը մնան կղզիին մէջ :

Մովակալ Բօթիէ զեկոյց մը զրկեց թուրք քաղաքային իշխանութեանց, որպէս զի իրենց պաշտօնատունները նոր վարչութեան յանձնելու պատրաստ չունին :

Վիէննայի Քոնէսթանտին Բօթիթիք կիմանայ թէ Ռուսիա արամագիր է թուրքերու, որ ինչպէս սուլթանական զերիշխանութեան քանի մը թուրք զինուորները գտնուին կղզիին մէջ : Միայն թէ այս թուրքատուութիւնը պիտի ընէ այն պայմանով որ դուռը փութայ Եօրկիտո իշխանը ընդունիլ իւր կառավարիչ կրէտէի : Ամէն պարագայի մէջ, չորս պետութիւններ վաւերացուցած են այս ընտրութիւնը, և մտերմ թուրքական պիտի ծանուցագրեն :

ՎԻԼՀԷԼՄԻ ՈՒՂԵԻՍՐՈՒԹԻՒՆԸ  
Գերմանիոյ կայսրը և կայսրուհին Եսաֆա հասան ամսոյս 17 ին և եռանդագին ընդունելութիւն մը գտան, առանց ցեղի և կրօնքի խտրութեան հետաքրքրներու ահագին բաղմութեան մը կողմէ : Հալառակ տիրող կիզիչ ջերմութեան, վեհապետները իրենց ճամբորդութիւնը շարունակեցին մինչև Ռապէլ—Աւատի : Նոյն օրը կէս օրէն ետքը Երուսաղեմ մտան, և Յիսուսի գերեզմանին վրայ, մատուցին իրենց համակ հաշիւ և նենդ քաղաքականութիւն բուրդ ուխտը :

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Այս պահուս երեք զլխաւոր խնդիրներ կը յուզեն այդ երկիրը . այսինքն՝ նախարարական տագնապը, ժաշոտան և կը զուշակէք անշուշտ . . . Տրէյֆիւսի խնդիրը :

Նախարարութիւնը արդէն կազմուելու վրայ է : Ինչպէս արդէն ծանուցինք, Հանրապետութեան նախագահը՝ Պ. Շարլ Տիւբիւի յանձնած է այդ գործը : Պ. Ֆրէսինէ սկզբունքով ընդունել է պատերազմական նախարարութիւնը : Յուսալի է որ այս պահուս նոր Գահիծը արդէն որոշուած ըլլայ :

Գալով ժաշոտաի խնդրին, Ֆրանսական կառավարութիւնը, Բարիզ հրաւիրած էր Մարչանի զլխաւոր աշխատակիցներէն, Պարաթիէր հարիւրապետը : Սա, իր պետին տեղեկագիրը մատուցանելէ և իր կառավարութեան հրահանգները ստանալէ ետքը, նորէն Գահիծէ մեկնած է, անկէց ալ Սուտանի այդ խորը ժաշոտա վերադառնալու համար : Իսկ Մարչան, առանց իր կառավարութեան արտօնութիւն

ստանալու, կերեւայ թէ քիչ մը օդ ծծելու համար, Գահիծէ գացել է, բայց այս պահուս անշուշտ իր տեղը վերադարձած ըլլալու է :

Անգլիական կառավարութիւնը ընտ կանոնադր բանակցութիւններու մտնալու խօսքը լսել չուզել, և մինչև վերջը կը պնդէ թէ ժաշոտաի խնդիր մը տեղի չկրնար ունենալ : Եւ սակայն միշտ աշխատել է, իբր փոխարինութիւն ու գործը անուշտեղը կանգնելու միջոց՝ առեւտրական կայան մը թողուլ ֆրանսայի, և զուտի մէկ կէտին վրայ : Միւս կողմէ, անգլիացի պետական անձնորը, իրենց անվերջ բանախօսութիւններուն շարքը կը շարունակեն : Ամենքն ալ կը խորշին պատերազմի մը պարագային, բայց ամենքն ալ միահամուտ են խորհուրդ տալու կառավարութեան սր տեղի շտայ :

Մենք չենք ասել, որ սր է անոնցմէ մէկը, Ֆրանսան նուազատուցել, բայց որոշուած ենք նուազատութիւն մը չկրել անոր կողմէ : Չենք կարող հանդուրձել որ Ֆրանսա ի վերջ հանէ մեր՝ Բարիկուտոյ Գլոխր Գահիծէի միացնելու ծրագիրը :

Վճռաբեկ ատեանը յաջողական երեք նիստերու մէջ Տրէյֆիւսի գաւին վերաքննութեան խնդրով դրազեցաւ : Բարիզի օտարականութիւնը գերմարդկային ճիգեր թափելու պարտաւերցաւ, չվճիւթիւններու առաջքը առնելու համար :

Տեղեկաբեր Պ. Պառ, ընդհ. գաղտնազ Մանօ և Տիկին Տրէյֆիւսի փաստաբան Մուսաու զըլխաւոր խօսողներն եղան ատենին մէջ : Ոչ թէ միայն փաստաբանը, այլ և գաղտնական այդ կարեւոր պաշտօնատարները բոլորովին նպաստաւոր խօսեցան աքսորականին :

Պ. Պառ նախ յիշեցուց թէ 1894 ի գաղտնաբարութեան միջոցին, Տրէյֆիւսը գաղտնաբարութիւն տուող զլխաւոր վկայն եղած է Էսթեր-հազիլի մտերիմ կեղծարար Հէնրի գնդապետը : Ապա ապացուցուց թէ Տրէյֆիւսի բարոյականին վրայ յօրինուած աննպատ տեղեկագիրը անհիմն է . նոյնպէս անհիմն Լըպրէօն հարիւրապետին յայտարարութիւնը (թէ Տրէյֆիւս խտրութեան թիւն ըրած է) որ գաղտնաբարութեան էր քաղաքի ետքը միայն հապարակ հանուցաւ : Հետեւաբար, ըստ Պ. Պառ, ամբաս անութեան միակ հիմ կը մնայ «Պօստրոն», որ մասնագէտներու վկայութիւնով իսկ, ընտ Տրէյֆիւսի ձեռքով գրուած չէ :

Ընդհ. գաղտնաբարութեան խօսութիւնն ալ ոչլամբիտ գաղտնաբարութեան փայլուն շարք մը եղաւ : Ըստ թէ գաղտնաբար պէտք է ամեն միջոց գործադրէ, ամբողջ ճշմարտութիւնը երեւան

հանելու համար, թէ՛ յանցաւորները ով որ ալ ըլլան իրենց արդար պատիժները կրելու են : Ստատիկ բողոքեց անոնց դէմ, որ վերաքննութիւնը բանակին դէմ նախատինք կը համարին : Այսօր, ըստ, Ֆրանսան իր բոլոր գաղտնաբարութեան պաշտպանութեան ներքեւ է . յիմարութիւն է ըսել թէ մենք արամագիր ենք մեր գաղտնաբար և բարեկամները նախատելու : Պ. Մանօ նոյն իսկ պահանջեց որ մինչև գաւին վերջանալուն, Տրէյֆիւս ազատ թողուի, պարզ հսկողութեան մը տակ աւտուելով :

Ատեանը երեք ժամուան խորհրդակցութեան մը ետքը, գաւտին վերաքննութեան պէտքը սկզբունքով ընդունեց, և սուշեց յ Էսթերական քննութեան մը ձեռնարկել :

Խ Ռ Ն Լ ՈՒՐԵՐ

Պէլք անուն գերմանացի երկրաբան մը, իր թուրք հետաքննարկներն պահ մը զատուելով, Սիւսիանացի կողմերը երկնցած ատեն, քիւրքապակիներու ձեռքով կողոպուտ և վիրաւորուել է : Գերմանական գե. պահին լուկոքին վրայ, Սուլթանը հրամայել է որ յանցաւորները խնդին ձեռքաւարտին ու պատժուին : Եւ արդարեւ քիչ օրէն գաւտուել են ոչ թէ միայն ոճ ազորները, այլ և գողցուած իրեզններուն ամբողջութիւնը և գրամբն մեծ մասը :

Էրեւայ թէ այս յարձակումը կառավարութեան հրահանգով չէ որ տեղի ունեցած էր :

Բարիզի մէջ խումբ մը հակահեղափոխական երեսփոխաններ, յայտարարութիւն մը ուղղեցին ժողովրդին, ըսելով թէ պէտք է ֆրանսական կառավարութիւնը ազատել հրեական ազդեցութենէն և Ֆրանսան հրէից լուծէն :

Վիէննայի ժանտարակներէն միայն Բէշա անուն հիւանդապահուհին վիճակն է որ լուրջ մտահոգութիւն կը ներշնչէ : Միւս վարակեալները համեմատաբար լաւ են : Քաղաքին մէջ յուզումը մեղմացած է . ակներեւ ըլլալով թէ ահաբի ախտը չպիտի կրնայ դուրս ելլել հիւանդանոցին շրջապատէն :

Լուր տարածուած էր թէ Բարիզի հաշտութեան համաձորովն սպանիացի և ամերիկացի անդամները, չկրնալով որոշ եզրակացութեան մը յանդիլ, իրարմէ բաժնուած են առանց գալիք նիստին թուականը որոշելու : Անհիմն է այս լուրը . և կը կարծուի թէ այս պահուս Սպանիան վերջնականապէս ընդունած է հրամարիլ Բուպաի վրայ իր ունեցած զերիշխանութեանէն և անոր բացարձակ անկախութիւնը ճանչցած : Միայն թէ ամերիկացի պատուիրակները աւելի պահանջող կը գառնան Ֆիլիպպիններ

ու խնդրին վրայ . և աչքի առաջ ունենալով ամերիկեան հանրային կարծիքին Պ. Մարքիսի վրայ ըրած ճնշումը, կը հետամտին օգոստ. 12 ին բրթօղոյին սղէն հեռանալ :

Աւելուողա կայսրուհիին անուն տարեգարձին առթիւ, Պոլսոյ գերման ուսանողները խմբերով մը երգած էին անոր պատահաններուն տակ : «Քիան» կը հարցնէ թէ այդ քրիստոնէական և հայրենավաւ երգը, արդեօք ազդեցութիւն մը կըրցած է ընել այն մարդուն վրայ, որ հայկական ջարդերու և թեօսալիոյ պատերազմին հետեւեալ օրը ընտրած է, աշխարհի առջեւ համարաշէնութիւն ցուցնելու համար Սուլթանի մը օրուն դէմ Երուսաղեմը :



ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱՆՆԻՔԻ ՆԻՓՕԼԱ ԳՐԱԼԻՎ—ՎԱՌՆԱ

Գլխաւոր գործաւար Սոֆիա Բարախի կառավարութեան կողմէն Երուսաղեմ տարած յիմալիսիանոսքեան

Պատիւ ունի ծանուցանել վառնալու չըջակայց արգոյ հասարակութեան թէ արդէն ի վաճառ հանած է սոյն վիճակահանութեան ամսսերը : Իրենց բարիք փորձելու օգոյնները կը հրաւիրուին գրմի վերջի կայ գրասենեակը այդ ամսսերէն գնելու համար : Փափագողներու ձրաբար կը զրկուի վիճակահանութեան յայտագիրը և ամէն յարակից տեղեկութիւններ :

ԽՄԵՆԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄԻ»

Կը ապագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակաղլուխ, հարսանական հրատարակիր, մահալղ, ինչպէս նաև պրօշիւններ :

Գիներն յոյժ դւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՎԱՐՊՕ  
ԵՐԿՈՒ ՍԼԻՐ  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՎԻԾ)  
—(—)  
(Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին վառնալու մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Առան կոչի մօտ . Ռուսոյք Հայկ Մայրաքանի սրճարանը, Սօֆիա Տ. Մուշեկ Արժոնիի քով :

Մտերմ մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բնութեան գահերը» :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Ս»

Վառնալու մէջ կը վաճառուի Մուսալա, թահմիլ կէօղիլկօյն քանի խանութը, և Ապախարահաման մզկիթին զիւր հայկական գրատունը : Ա. Ջարպանէլեանի քով :